ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

Ա Յ Ր Ք Հ Ա Մ Ա Յ Ն Ք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներկայացնում եմ ձեզ իմ կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը 2011թ ընթացքում:

2011 թվականին համայնքի բյուջեի սեփական եկամուտների կատարողականը կազմել է 77.9 տոկոս: Սակայն նշված ցուցանիշի մեջ ներառված է նաև «ՄԱՔՍ – ՖՐՈՒԹ » ՍՊԸ –ի վարձավճարի չափը ,որը կազմում է 2335,7 հազ. դրամ և այդ կազմակերպությանը վարձավճարը պայմանագրով նախատես – ված ժամկետում չվճարելու և վարձակալած վարելահողը ըստ նպատակային նշանակության չօգ- տագործելու պատճառով դատի եմ տվել պայմանագիրը լուծարելու և վարձավճարը բռնագանձելու հայցով: Դատական գործընթացը արդեն 1.5 տարի է ձգձգվում է ,բայց ի վերջո իմ կարծիքով լուծվե- լու է մեր օգտին : Եվ, եթե բյուջեի կատարողականից հանում ենք վերոհիշյալ գումարը , ապա մեր համայնքի սեփական եկամուտների առաջադրանքի կատարողականը կկազմի 116 տոկոս :
Միայն հողի վարձավճարի ուղղությամբ կատարողականը կազմել է 120,2 տոկոս :
Այս ամենը հանգեցրել է նրան , որ Այրքի գյուղապետարանը ներկա դրությամբ չունի աշխատավարձի ապառք կամ թերակատարված պետական պարտավորություն :
Համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր խորը ազդեցությունն է թողել նաև մեր համայնքի բնակչության , թե սոցիալական , և թե տնտեսական խնդիրների վրա , միաժամանակ նկատի ունե- նալով նաև այն փաստը , որ համայնքը բնակեցված է հիմնականում փախստականներով,որոնց սո – ցիալական վիճակը առավել քան վատ է ,ես ամեն հնարավորն ու ինչ որ տեղ նաև անհնարինն եմ արել բնակչության սոցիալական վիճակը որոշ չափով մեղմելու համար :
2011 թվականի ընթացքում իմ կողմից կատարվել է համայնքի բնակչության 192 ընդունելություն ,որի ճնշող մեծամասնությունը եղել է անձնական բնույթի հարցերով և որոնց տվել եմ հիմնականում դրա- կան լուծում :
Համայնքը սնող ջրագիծը կառուցված է անցյալ դարի 60 - ական թվականներին և բնականաբար դրա մի մասը շարքից դուրս է եկել ու դարձել է նվազ պիտանի : 2011 թվականի ընթացքում ջրագի- ծը 12 անգամ վթարվել է և գյուղի բնակչությունը մնացել է առանց խմելու ջրի : Իմ կողմից կազմակեր- վել և ամեն անգամ կարճ ժամանակամիջոցում վերացվել է վթարը :
Բացի այդ լավ ծանոթ լինելով համայնքի վարչական տարածքում եղած վարելահողերին, դրանց դիրքի առանձնահատկություններին և ունենալով գյուղատնտեսական կրթություն անձնական խորհու- րդներով ու իմ սեփական գյուղտեխնիկայով օգնել եմ հողի մշակներին :Արդյունքում գյուղացին ստացել է բարձր բերք և որոշ չափով բարելավել սեփական կենսամակարդակը : միայն 2011 թվակա- նի ընթացքում իմ համագյուղացիները ձեռք են բերել թվով ութ հատ սեփական ավտոմեքենա ,որից երկուսը՝ թանկարժեք :Իսկ հողի վարձակալության խնդրանքով դիմել է 22 բնակիչ :
2011 թվականին ավագանու հաստատմանն եմ ներկայացրել թվով տասը նախագիծ ,որոնց որո- շումները սահմանված ժամկետներում ուղարկվել են Գեղարքունիքի մարզպետին :
Եթե ինչ որ բան էլ չի արվել , ապա կամ չեմ հասցրել , կամ հնարավոր չի եղել անելու , բայց կաշխատեմ այսուհետ նույնպես անել ամեն ինչ համայնքի բնակչության կարիքները կիսով չափ թեթևացնելու և հոգսերը հոգալու համար :

Համայնքի ղեկավար Ա. Շաբոյան

31.01.2012թ